ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

17 նոյեմբերի 2026թ. **N 675-Ն**

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ, ՆՐԲԱՆՑՔՆԵՐ ԵՎ ՓԱԿՈՒՂԻՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Աջափնյակ վարչական շրջանի.

1) Ավետ Տերտերյան փողոցից սկսվող, դրան զուգահեռ ձգվելով և վերջնամասում թեքվելով, հ.01-001-0403-0006 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ավետ Տերտերյան փողոց, 1-ին նրբանցք,**

2) Ավետ Տերտերյան փողոցից սկսվող և դրան զուգահեռ ձգվելով դեպի հյուսիս, Ավետ Տերտերյան փողոցի 1-ին նրբանցքը հատելով և ձախ ուղղությամբ թեքվելով, հ.01-001-0403-0034 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ավետ Տերտերյան փողոց, 2-րդ նրբանցք,**

3) Անանիա Շիրակացու փողոցից սկսվող, Անանիա Շիրակացու փողոցի 2-րդ նրբանցքին զուգահեռ ձգվելով և Էդուարդ Բաղդասարյան փողոցը հատելով, հ.01-001-0423-0003 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Անանիա Շիրակացու փողոց, 1-ին նրբանցք,**

4) Անանիա Շիրակացու փողոցից սկսվող, Անանիա Շիրակացու փողոցի 1-ին նրբանցքին զուգահեռ ձգվելով, Ավետ Տերտերյան փողոցի 1-ին նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Անանիա Շիրակացու փողոց, 2-րդ նրբանցք:**

2.Ավան վարչական շրջանի.

1) Մարշալ Բաբաջանյան փողոցից սկսվող և h.01-002-0108-0304 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Մարշալ Բաբաջանյան փողոց, 1-ին փակուղի,**

2) Մարշալ Բաբաջանյան փողոցից սկսվող և Ա. Շահինյան փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Մարշալ Բաբաջանյան փողոց, 2-րդ նրբանցք:**

3.Արաբկիր վարչական շրջանի.

1) Հովսեփ Արղության փողոցից սկսվող, կիսաշրջան կազմելով Ս. Մալխասյանց փողոցի նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Հովսեփ Արղության փողոց, 3-րդ նրբանցք,**

2) Գ. Ղափանցյան փողոցի 01-003-0311-0146 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և Քանաքեռ ՀԷԿ հասնող ճանապարհահատվածն անվանակոչել պրոֆեսոր, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի անվամբ՝ **«Սերգեյ Համբարձումյան փողոց»,**

3) Գ. Ղափանցյան փողոցի h.01-003-0303-0016 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և h.01-003-0326-0001 ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել պետական և դիվանագիտական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր Կամո Ուդումյանի անվամբ՝ **«Կամո Ուդումյան փողոց»,**

4) Հ.01-003-0303-0112 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և h.01-003-0303-0005 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց, 1-ին նրբանցք,**

5) Հ.01-003-0321-0005 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և h.01-003-0325-0006 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց, 2-րդ նրբանցք,**

6) Հ.01-003-0323-0011 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և h.01-003-0323-0027 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց**, **3-րդ նրբանցք,**

7) Հ.01-003-0304-0001 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և h.01-003-0326-0006 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց**, **4-րդ նրբանցք,**

8) Հ.01-003-0322-0001 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և h.01-003-0501-0192 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց, 5-րդ նրբանցք,**

9) Հ.01-003-0501-0190 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և h.01-003-0501-0037 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց, 1-ին փակուղի,**

10) Հ.01-003-0501-0192 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և հ.01-003-0333-0025 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Կամո Ուդումյան փողոց, 2-րդ փակուղի,**

11) Գ. Ղափանցյան փողոցի հ.01-003-0301-0017 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և Քանաքեռ ՀԷԿ (հ.01-003-0501-0134 կադաստրային ծածկագրով հողամաս) հասնող ճանապարհահատվածն անվանակոչել ֆուտբոլիստ, միջազգային կարգի սպորտի վարպետ Հովհաննես Զանազանյանի անվամբ՝ **«Հովհաննես Զանազանյան փողոց»,**

12) Հ.01-003-0303-0001 կադաստրային ծածկագրով գույքի մոտից սկսվող և հ.01-003-0331-0002 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Հովհաննես Զանազանյան փողոց, 1-ին փակուղի:**

4. Նոր Նորք վարչական շրջանի.

1) Բագրևանդի փողոցից սկսվող, Ն. Ստեփանյան և Մոլդովական փողոցների հատման մաս հասնող ճանապարհահատվածն անվանակոչել հայ կոմպոզիտոր, ջութակահար, պրոֆեսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Սերգեյ Աղաջանյանի անվամբ՝ «**Սերգեյ Աղաջանյան փողոց»,**

2) Սերգեյ Աղաջանյան փողոցից սկսվող և հ.01-008-0506-0274 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Սերգեյ Աղաջանյան փողոց, 1-ին նրբանցք,**

3) Սերգեյ Աղաջանյան փողոցից սկսվող և Մոլդովական փողոցի 3-րդ նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Սերգեյ Աղաջանյան փողոց, 2-րդ նրբանցք,**

4) Բագրևանդի փողոցից սկսվող և Բագրևանդի փողոցի 3-րդ նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Բագրևանդի փողոց, 1-ին նրբանցք,**

5) Բագրևանդի փողոցից սկսվող, Բագրևանդի փողոցի 1-ին նրբանցքը հատող և հ.01-008-0506-0188 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Բագրևանդի փողոց, 2-րդ նրբանցք,**

6) Բագրևանդի փողոցից սկսվող և հ.01-008-0506-0709 կադաստրային ծածկագրով գույք հասնող, Բագրևանդի փողոցի 4-րդ նրբանցքին զուգահեռ ճանապարհահատվածն անվանակոչել **Բագրևանդի փողոց, 3-րդ նրբանցք,**

7) Բագրևանդի փողոցից սկսվող, Բագրևանդի փողոցի 2-րդ նրբանցքը հատող ճանապարհահատվածը, որը զուգահեռ է Բագրևանդի փողոցի 2-րդ և 3-րդ նրբանցքներին, անվանակոչել **Բագրևանդի փողոց, 4-րդ նրբանցք,**

8) Մոլդովական փողոցից սկսվող և Բագրևանդի փողոցի 3-րդ նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Մոլդովական փողոց, 3-րդ նրբանցք:**

5. Նորք-Մարաշ վարչական շրջանի.

1) Էդուարդ Իսաբեկյան փողոցի վերջից սկսվող և Նորքի 2-րդ փողոցի հ.01-009-0013-0030 կադաստրային ծածկագրով գույքի մոտ հասնող ճանապարհահատվածն

անվանակոչել նկարչուհի, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Ռեգինա Ղազարյանի անվամբ՝ **«Ռեգինա Ղազարյան փողոց»,**

2) Ռեգինա Ղազարյան փողոցից սկսվող և h.01-009-0013-0004 կադաստրային ծածկագրով գույքի մոտ հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ռեգինա Ղազարյան փողոց, 1-ին նրբանցք,**

3) Էդուարդ Իսաբեկյան փողոցի h.17 հասցեից սկսվող և h.01-009-0014-0014 կադաստրային ծածկագրով գույք հասնող, h.01-009-1043-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհահատվածն անվանակոչել **Էդուարդ Իսաբեկյան փողոց, 1-ին փակուղի,**

4) Դավիթ Բեկի փողոցից սկսվող, Բուժաշխատողների փողոցը հատելով Էդուարդ Իսաբեկյան փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել սփյուռքահայ նկարիչ Մարկոս Գրիգորյանի անվամբ՝ **«Մարկոս Գրիգորյան փողոց»,**

5) Գ. Հովսեփյան և Դավիթ Բեկ փողոցների միջև ընկած h.01-009-1056-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհահատվածն անվանակոչել թատրոնի և կինոյի նշանավոր դերասան, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Վլադիմիր Մսրյանի անվամբ՝ **«Վլադիմիր Մսրյան փողոց»,**

6) Ա. Արմենակյան փողոցից սկսվող և մինչև Էրեբունի վարչական շրջանի Մ. Խորենացու փողոցի 3-րդ փակուղի ձգվող ճանապարհահատվածն անվանակոչել **Սարալանջի փողոց:**

6. Շենգավիթ վարչական շրջանի.

1) Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Կենտրոնական փողոցից սկսվող և Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 21-րդ փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 33-րդ փողոց,**

2) Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 1-ին փողոցից սկսվող և Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 4-րդ փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 1-ին փողոց, 1-ին նրբանցք,**

3) Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 4-րդ փողոցից սկսվող և մինչև h.01-011-0624-0099 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 4-րդ փողոց, 1-ին փակուղի,**

4) Նոր Խարբերդի այգեգործական տարածքի Կենտրոնական փողոցից սկսվող և Նոր Խարբերդի այգեգործական տարածքի 1-ին փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նոր Խարբերդի այգեգործական տարածք, Կենտրոնական փողոց, 1-ին նրբանցք,**

5) Նորագավիթի 13-րդ փողոցի h.01-011-0495-0002 կադաստրային ծածկագրով գույքից սկսվող և h.01-011-1387-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհ հասնող հատվածն անվանակոչել **Նորագավիթի 13-րդ փողոց, 1-ին նրբանցք,**

6) Նորագավիթի 14-րդ փողոցից սկսվող և հ.01-011-0314-0017 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորագավիթի 15-րդ փողոց,**

7) Նորագավիթի 15-րդ փողոցից սկսվող և հ.01-011-0315-0011 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորագավիթի 15-րդ փողոց, 1-ին նրբանցք,**

8) Հ.01-011-0310-0028 կադաստրային ծածկագրով գույքից սկսվող, Նորագավիթի 15-րդ փողոցը հատելով հ.01-011-0317-0012 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորագավիթի 15-րդ փողոց, 2-րդ նրբանցք,**

9) Հ.01-011-0312-0001 կադաստրային ծածկագրով գույքից սկսվող, Նորագավիթի 15-րդ փողոցը հատելով հ.01-011-0318-0011 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորագավիթի 15-րդ փողոց, 3-րդ նրբանցք,**

10) Հ.01-011-0313-0001 կադաստրային ծածկագրով գույքից սկսվող, Նորագավիթի 15-րդ փողոցը հատելով հ.01-011-0019-0998 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորագավիթի 15-րդ փողոց, 4-րդ նրբանցք:**

7. Կենտրոն վարչական շրջանի.

1) Սարալանջի փողոցի՝ Աբովյան պուրակից մինչև «Հաղթանակ» զբոսայգի հատվածն անվանափոխել **Ազատության պողոտա** (որպես Ազատության պողոտայի սկիզբ):

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 17
Երևան